**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ** 2026-2031 **ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

| հ/հ | Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Կարգավիճակ | Առաջարկության բովանդակությունը | Կցված փաստաթղթեր | Եզրակացություն | Դրույթ |
|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | **ԱՐԾԱԼՈՒՅՍ ԳԱԼՍՏՅԱՆ** (arshaluys.galstyan@ysu.am)<br>31.10.2026 15:20:04 | | **ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ կառավարության** 2026–2031 **թվականների գործունեության միջոցառումների ծրագրի նախագծի վերաբերյալ**<br>Սույն առաջարկությունները վերաբերում են ՀՀ կառավարության 2026–2031 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի նախագծի այն դրույթներին, որոնց մշակման և իրականացման գործընթացներում ժամանակակից հայոց լեզվի ամբիոնը կարող է ունենալ գիտամեթոդական և փորձագիտական ներդրում: Առանձնացվում են ծրագրի կատարելագործման համար առավել էական առաջարկությունները և ամբիոնի | | **Ընդունվել է ի գիտություն**: | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | մասնակցության լրացուցիչ հնարավորությունները: | | | |
| | | | I. **ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**<br><br>1. **Հայերենի իմացության գնահատման գիտամեթոդական հիմքերի հստակեցում** (**նպատակ** 6.1).<br><br>Առաջարկվում է առցանց գնահատման համակարգի ներդրումից առաջ սահմանել գնահատման նպատակը, չափվող լեզվական և հաղորդակցական կարողությունները, մակարդակային նկարագրիչներն ու գնահատման չափանիշները: Հայախոսների և ոչ հայախոսների համար անհրաժեշտ է մշակել նպատակներին համապատասխան տարբերակված գործիքակազմեր: Առաջադրանքների շտեմարանների ձևավորմանը զուգահեռ պետք է նախատեսել դրանց փորձարկում, գնահատման արդյունքների վավերականության և հուսալիության ուսումնասիրություն, ինչպես նաև գնահատման ընթացակարգերի | | **Ընդունվել է ի գիտություն**:<br><br>Հավելված 2-ում «Լեզվական քաղաքականություն» ենթագլխում Նպատակ 6.1-ի ներքո նախատեսվում է «Ոչ հայախոսների համար հայերենի իմացության ստուգման ու գնահատման չափելի գործիքակազմի ներդրում և համակարգի շարունակական զարգացման ապահովում» միջոցառումը:<br><br>Ներկայացված առաջարկով նախատեսվում է «առցանց գնահատման համակարգի ներդրումից առաջ սահմանել գնահատման նպատակը, չափվող լեզվական և հաղորդակցական կարողությունները, մակարդակային նկարագրիչներն ու գնահատման չափանիշները…»:<br><br>Այս համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարի N35-Լ հրամանով 2025թ. դեկտեմբերի 26-ին հաստատվել են «Ոչ հայախոսների համար հայերենի | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | պարբերական վերանայում: | | (արևելահայերենի) իմացության մակարդակների պետական չափորոշիչները» (https://shorturl.at/aqYfl), որոնք սահմանում են լեզվական և հաղորդակցական կարողությունները չափող մակարդակների նկարագրիչներն ու գնահատման չափանիշները: Չափորոշիչը, մինչև հաստատվելը, քննարկվել է մասնագիտական հանրության հետ: ՀՀ բոլոր բուհերին և հայերենը՝ որպես օտար լեզու դասավանդող կառույցներին ուղարկվել է մասնակցության հրավեր: Քննարկման արդյունքները ամփոփվել և հաշվի են առնվել չափորոշչի վերջնականացման փուլում: Տեղեկատվությունը առկա է Լեզվի կոմիտեի պաշտոնական ֆեյսբուքյան էջում (https://shorturl.at/m3Yux):<br><br>Սույն առաջարկի մնացած կետերը ներառված են Նպատակ 6.1-ով սահմանված միջոցառումներում: | |
| | | | 2. **Հայերենի արտաքին գնահատման բովանդակության կատարելագործում (նպատակ** | | **Չի ընդունվել**:<br>Առաջարկվող միջոցառման շրջանակում գնահատումը պետք է | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 2.4).<br><br>Առաջարկվում է հայերենի արտաքին գնահատման գործիքակազմը կառուցել ոչ միայն լեզվական գիտելիքների, այլև ընթերցածի ըմբռնման, տեքստի մեկնաբանման, փաստարկման և գրավոր հաղորդակցության կարողությունների հիման վրա՝ պահպանելով համապատասխանությունը հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքներին: Նախատեսել առաջադրանքների որակի փորձագիտական գնահատում և գնահատման հստակ սանդղակների մշակում: | | ուղղված լինի սովորողների՝ տարբեր ոլորտներից ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և կարողությունների կիրառման մակարդակի բացահայտմանը՝ գնահատելով ոչ միայն առարկայական գիտելիքների իմացությունը, այլև դրանց կիրառումը գործնական իրավիճակներում, տեղեկատվության վերլուծությունը, տրամաբանական դատողություններ կատարելու և խնդիրներ լուծելու կարողությունները: Հետևաբար, գնահատման բովանդակությունը չի սահմանափակվում հայերենի լեզվական գիտելիքների ստուգմամբ, իսկ ընթերցանության և ընթերցածի ընկալմանն ուղղված բաղադրիչն արդեն նախատեսված է այլ միջոցառմամբ, ուստի դրա կրկնակի ներառումը նպատակահարմար չէ: Մասնավորապես, հայերենի ստուգմանը վերաբերող հարցերը արդեն իսկ դրված են հայախոսների համար մշակվող չափորոշիչների հիմքում: | |
| | | | 3. **Դպրոցից բուհ անցման գնահատման փուլերի** | | **Չի ընդունվել**:<br>«Բարձրագույն կրթության և | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | **համաձայնեցում** (**նպատակ** 5.4).<br><br>Առաջարկվում է համաձայնեցնել ընդունելության նոր համակարգի գործարկման և հայերենի արտաքին գնահատման մշակման, փորձարկման ու ներդրման ժամկետները: Անհրաժեշտ է հստակեցնել, թե գնահատման որ փուլում և ինչ կարգով կարող են արդյունքները կիրառվել բուհ ընդունվելու գործընթացում՝ ապահովելով գործիքակազմի նախնական փորձարկումն ու դիմորդների պատշաճ իրազեկումը: | | գիտության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ բուհերի հրապարակած ընդունելության կարգում փոփոխությունները և լրացումները կարող են ուժի մեջ մտնել հրապարակումից երեք տարի հետո, բացառությամբ ավելի նպաստավոր պայմանների սահմանման, ինչպես նաև այն դեպքերի, երբ փոփոխությունների և լրացումների կատարման անհրաժեշտությունը պայմանավորված է հայտարարված արտակարգ կամ ռազմական դրությամբ: Հետևաբար, ընդունելության նոր համակարգի ներդրման հետ կապված կարգավորումների ուժի մեջ մտնելու ժամկետներն արդեն իսկ սահմանված են օրենսդրությամբ, ուստի առաջարկով ներկայացված ժամկետների հստակեցումը նպատակահարմար չէ: | |
| | | | 4. **Հայերենի՝ որպես օտար և ժառանգական լեզվի ուսուցման տարբերակում** (**նպատակ** 6.2).<br><br>Առաջարկվում է օտարախոս միջավայրերի համար նախատեսվող ծրագրերն ու ուսումնանյութերը մշակել՝ հաշվի առնելով սովորողների լեզվական | | **Ընդունվել է ի գիտություն**:<br>Հավելված 2-ում «Լեզվական քաղաքականություն» ենթագլխում Նպատակ 6.2-ի ներքո ներկայացված է «Հայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի և ուսումնական նյութերի | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կենսագրությունը, հայերենի նախնական իմացությունը և հաղորդակցական կարիքները: Մասնավորապես, անհրաժեշտ է մեթոդական առումով տարբերակել հայերենը որպես օտար լեզու սովորողների և հայկական ընտանիքում լեզվական ժառանգություն ունեցող սովորողների կրթական պահանջները: Նախատեսել նաև դասավանդողների վերապատրաստում և ուսումնառության արդյունքների գնահատում: Դասավանդողների մասնագիտական որակավորման շարունակական բարձրացման նպատակով առաջարկվում է ներդնել մասնագիտական խորհրդատվության և անհատական մեթոդական աջակցության մեխանիզմներ՝ հիմնված նրանց մասնագիտական կարիքների ուսումնասիրության և դասավանդման ընթացքում առաջացող խնդիրների վերլուծության վրա: Կարևորել նաև մասնագիտական փորձի փոխանակման, գործնական խնդիրների համատեղ քննարկման և ձեռք բերված գիտելիքներն ու | | մշակում և օտարերկրյա ուսումնական հաստատություններում դրանց կիրառման ապահովում» միջոցառումը:<br><br>Սույն առաջարկով ներկայացվող գործողությունները արդեն իսկ նախատեսվում են Նպատակ 6.2-ի միջոցառմամբ: | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հմտությունները դասավանդման գործընթացում կիրառելու հնարավորությունների ընդլայնումը: | | | |
| | | | 5. **Ընթերցողական կարողությունների չափորոշիչների գիտական հիմնավորում** (**նպատակ** 3.5).<br><br>Առաջարկվում է ընթերցանության դպրոցական չափորոշիչներում սահմանել տեքստի ուղղակի և ենթադրյալ իմաստի ընկալման, տեղեկատվության համադրման, եզրահանգման և քննադատական մեկնաբանության կարողությունների տարիքային նկարագրիչներ: Ընթերցանության զարգացման ծրագրերի արդյունավետությունը գնահատել նախնական և հետագա չափումներով՝ արդյունքները կիրառելով ուսումնամեթոդական մոտեցումների կատարելագործման համար: | | **Ընդունվել է ի գիտություն**: Առաջարկությամբ ներկայացված ընթերցողական նշված կարողություններն արդեն ներառված են գործող, նոր խմբագրմամբ հաստատված առարկայական ծրագրերում: Օրինակ՝<br><br>• 4-րդ դասարանի «Մայրենի» առարկայի վերջնարդյունքներից մեկը՝ ***Հասկանալով ընթերցել, մտքեր արտահայտել ենթատեքստի վերաբերյալ, ոչ գրական տեքստից դուրս բերել անհրաժեշտ տեղեկությունները,***<br><br>• 6-րդ դասարանի «Մայրենի» առարկայի վերջնարդյունքներից մեկը՝ ***Բացահայտել հիմնական գաղափարը, վերլուծել պատճառահետևանքային կապերը, հիմնավորել տեսակետը և գնահատել փաստարկները,***<br><br>• 8-րդ դասարանի «Գրականություն» առարկայի վերջնարդյունքներից մեկը՝ ***Ըմբռնել*** | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ***երկի ենթիմաստը և գրել վերլուծական շարադրանքներ:***<br><br>Միաժամանակ այդ վերջնարդյունքների հիման վրա մշակվել են առարկայական չափելի բնութագրիչներ, որոնք նպաստում են սովորողի առաջընթացն արձանագրելուն: | |
| | | | 6. **Հայերենի թվային լեզվական ռեսուրսների որակի ապահովում** (**նպատակ** 4.4). Առաջարկվում է հայերենի կորպուսների, տվյալաշարերի և արհեստական բանականության լեզվական գործիքների մշակմանը զուգահեռ՝ նախատեսել լեզվաբանական փորձաքննություն: Մասնագետների մասնակցությամբ սահմանել տվյալների ընտրության և ծանոթագրման չափանիշներ, կորպուսների ներկայացուցչականության սկզբունքներ և լեզվական մոդելների քերականական, իմաստային ու ոճական ճշտության գնահատման գործիքներ՝ պահպանելով տվյալների օրինական օգտագործման պահանջները: | | **Ընդունվել է ի գիտություն**:<br><br>Հավելված 3-ի «Գլուխ 3. Գիտելիքահենք և նորարարական տնտեսության» «Ենթագլուխ 4. Արհեստական բանականություն» Նպատակ 4.4-ի իրականացմանն ուղղված առկա միջոցառումները մշակվում և փորձարկվում են որոշակի գիտական մեթոդաբանությամբ, որը ինքնին ենթադրում է համապատասխան մասնագիտական ներուժի ներգրավում: | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 7. **Խոսքի կառուցման և լեզվամտածողության փոխառնչությունների ուսումնասիրություն** (**հավելված** 3, **նպատակ** 2.1)՝ Խթանել ժամանակակից հայերենի շարահյուսական և իմաստային կառուցվածքների ուսումնասիրությունը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով մտքի լեզվական ձևակերպման, խոսքի կազմակերպման և լեզվամտածողության ճանաչողական օրինաչափությունների փոխառնչություններին. | | **Ընդունվել է ի գիտություն**՝<br>Հավելված 3-ի նպատակ 2.1-ի ներքո սահմանված հայագիտությանը վերաբերելի միջոցառման շրջանակում արդեն իսկ նախատեսվում է հումանիտար, այդ թվում՝ հայագիտական ուղղվածության հետազոտությունների իրականացում՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցով, ինչպես նաև միջազգային գործընկերների հետ համատեղ հետազոտական ծրագրերի իրականացում: Ներկայացված առաջարկը՝ ժամանակակից հայերենի շարահյուսական և իմաստային կառուցվածքների, խոսքի կազմակերպման և լեզվամտածողության ճանաչողական օրինաչափությունների ուսումնասիրությունները կարող են դիտարկվել՝ որպես դրամաշնորհային ծրագրերի շրջանակում ներկայացվող առանձին նախագծեր: | |
| | | | II. **ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**<br>1. **Հանրակրթական ծրագրերի** | | **Չի ընդունվել**՝<br>2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման 2-րդ գլխի 5-րդ կետի 1-ին | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | **վերանայում** (**նպատակ** 2.2).<br><br>Հայոց լեզվի առարկայական չափորոշչի, ծրագրերի և ուսումնանյութերի լեզվաբանական ու մեթոդական պարբերական փորձաքննություն՝ գնահատման արդյունքները բովանդակության արդիականացման գործընթացում կիրառելու նպատակով: | | ենթակետով սահմանված է, որ «Հանրակրթության պետական չափորոշիչը կարող է վերանայվել ուսումնական հաստատություններում չորս տարին մեկ անգամ իրականացված վերլուծության արդյունքների հիման վրա», ինչը ենթադրում է նաև, ըստ անհրաժեշտության, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման հնարավորություն:<br><br>Առաջարկությունը համապատասխանում է ՀՊՉ-ի տրամաբանությանը, որը նախատեսում է կարողունակությունների ձևավորում՝ գիտելիքի, հմտության, դիրքորոշման և արժեքի փոխկապակցմամբ և միտված է՝ նպաստելու ծրագրերի որակի բարելավմանը: Այս տրամաբանությամբ էլ պայմանավորված էին չափորոշիչների և ծրագրերի լրամշակումները: Համաձայն ՀՊՉ պահանջների՝ հայոց լեզվի և գրականության ծրագրերը փոխկապակցված են, առաջադրանքները համապատասխանում են | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | վերջնարդյունքներին, ապահովված է դասարանների միջև շարունակականությունը, բովանդակությունը զարգանում է տարիքից տարիք, և բոլոր փոփոխությունները, որ կատարվել են, պայմանավորված էին նաև կիրառության տվյալներով ու ուսուցիչների արձագանքներով: | |
| | | | 2. **Օտարերկրյա ուսանողների լեզվական ինտեգրում** (**նպատակ** 5.3). Հայերենի կամընտիր, մակարդակային դասընթացների և ակադեմիական միջավայրին ծանոթացնող ուսումնանյութերի մշակում՝ ըստ օտարերկրյա ուսանողների կարիքների: | | **Չի ընդունվել**:<br>Նպատակ 5.3-ի ներքո ներկայացված «Բարձրագույն կրթության միջազգայնացման և օտարերկրյա ուսանողների ներգրավման ծրագրերի իրականացում» միջոցառումն ուղղված է բարձրագույն կրթության միջազգայնացմանը՝ միջազգային գործընկեր բուհերի հետ համագործակցության ընդլայնման, միջազգային հեղինակավոր համալսարանների կրթական ծրագրերի տեղայնացման, ՀՀ բուհերում օտարալեզու կրթական ծրագրերի ներդրմանը և դրանց լիցենզավորման ու հավատարմագրման համար անհրաժեշտ պայմանների ձևավորմանը: Մինչդեռ ներկայացված առաջարկը | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | վերաբերում է ՀՀ բուհերում սովորող օտարերկրյա ուսանողների լեզվական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև հայկական բուհական միջավայրում նրանց ինտեգրման և հարմարվողականության ապահովմանը, ուստի բովանդակային առումով չի համապատասխանում միջոցառմամբ նախատեսված նպատակին և ակնկալվող արդյունքների շրջանակին:<br><br>Այդուհանդերձ, առաջարկը ողջունելի է և կարող է իրականացվել բուհերի նախաձեռնությամբ՝ օրենքով բուհերին վերապահված ակադեմիական ազատության և ինքնավարության համատեքստում: | |
| | | | 3. ***Ժամանակակից հայերենի հետազոտությունների զարգացում*** (**հավելված** 3, **նպատակ** 2.1).<br><br>Կորպուսային, կիրառական և միջգիտակարգային հետազոտությունների խրախուսում՝ ներառյալ ժամանակակից հայերենի | | **Ընդունվել է ի գիտություն**:<br>Հավելված 3-ի Նպատակ 2.1-ի ներքո ներկայացված միջոցառումն արդեն իսկ նախատեսում է Հայագիտության և հումանիտար ոլորտի ռազմավարական ծրագրով սահմանված գործողությունների շրջանակում հումանիտար հետազոտությունների, այդ թվում՝ հայագիտական ուղղվածության | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | բառապաշարի, լեզվական փոփոխությունների և տերմինաբանության ուսումնասիրությունները: | | հետազոտությունների իրականացմանն ուղղված դրամաշնորհային ծրագրերի իրականացում, որոնց շրջանակում կարող են ներկայացվել նաև առաջարկով նշված թեմաներով հետազոտական նախագծեր: | |
| | | | 4. **Սփյուռքի կրթօջախների և հայագիտական կենտրոնների հետ համագործակցություն** (**հավելված** 2, **գլուխ** 2.2). Հայերենի ուսուցման կարիքների ուսումնասիրություն, համատեղ ուսումնանյութերի մշակում և ժամանակակից հայերենի ու երկլեզվության վերաբերյալ հետազոտական ծրագրերի իրականացում: | | **Ընդունվել է ի գիտություն**: Հավելված 2-ի «Գլուխ 2. Սփյուռքի հետ կապեր» հատվածի ներքո ներկայացված միջոցառման շրջանակում, ի թիվս այլ ծրագրերի, իրականացվում են նաև հայերենի ուսուցման կարիքների ուսումնասիրության, համատեղ ուսումնական նյութերի մշակման, ինչպես նաև ժամանակակից հայերենի և հայագիտության զարգացման վերաբերյալ հետազոտական ծրագրեր: | |
| | | | 5. **Լեզվական իմաստի ընկալման առանձնահատկությունների ուսումնասիրություն** (**հավելված** 3, **նպատակ** 2.1, **միջոցառում** 3): Խրախուսել ժամանակակից հայերենի իմաստային և հաղորդակցական առանձնահատկությունների ուսումնասիրությունը՝ կարևորելով համատեքստի, | | **Ընդունվել է ի գիտություն**: Հավելված 3-ի Նպատակ 2.1-ի ներքո ներկայացված միջոցառման շրջանակում արդեն իսկ նախատեսվում է հումանիտար, այդ թվում՝ հայագիտական ուղղվածության հետազոտությունների իրականացում՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցով, ինչպես նաև | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հասկացությունների իմաստային կապերի և լեզվական փորձառության ազդեցությունը խոսքի ընկալման ու մեկնաբանման գործընթացների վրա: | | միջազգային գործընկերների հետ համատեղ հետազոտական ծրագրերի իրականացում:<br>Ներկայացված առաջարկը՝ ժամանակակից հայերենի իմաստային և հաղորդակցական առանձնահատկությունների ուսումնասիրությունը կարող են դիտարկվել որպես դրամաշնորհային ծրագրերի շրջանակում ներկայացվող առանձին նախագծեր: | |
| | | | **ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ**<br><br>Առաջարկվում է որպես առաջնահերթություն դիտարկել 6.1, 2.4, 5.4, 6.2, 3.5, 4.4 և հավելված 3-ի 2.1 ուղղությունները, իսկ մնացած դրույթներով նախատեսել ամբիոնի մասնակցությունը՝ համապատասխան ստորաբաժանումների հետ համագործակցությամբ:<br>Վերջնական խմբագրության մեջ նպատակահարմար է յուրաքանչյուր առաջարկության համար որոշակիացնել ակնկալվող արդյունքը և պատասխանատու կամ գործընկեր կառույցների շրջանակը: | | **Ընդունվել է ի գիտություն**:<br>Ողջունելի է համալսարանական գիտական միավորի նախանձախնդրությունը Կառավարության ծրագրի միջոցառումների իրականացմանն աջակցելու կամ օժանդակելու գործում:<br>Ըստ անհրաժեշտության՝ ամբիոնը կներգրավվի համապատասխան ուղղություններով աշխատանքներում՝ համագործակցելով շահագրգիռ մարմինների / ստորաբաժանումների, ինչպես նաև՝ մասնագիտական հանրության հետ: | |